Դահլիճի ճառի այն մասը, որ վերաբերում է Անգլիայի արտաքին յարաբերութիւններին, հետևեալ կերպով է կազմված. «Բոլոր պետութիւնների հետ իմ ունեցած յարաբերութիւնները առաջվայ պէս բարեկամական են: Պարլամէնտի յետաձգելու օրից սկսած՝ գործերի ընթացքն այն տեսակ էր, որ պէտք է նոր ապահովութիւն տար եւրոպական ընդհանուր խաղաղութեանը, համաձայն Բերլինի դաշնագրում հաստատված լրակազմութիւնների:»

«Վերջին պատերազմը Թիւրքիայի շատ անհանգստութիւններ պատճառեց. այդ անկարգութիւնները հեռացնելու համար, գեա շատ գործ է ճեռք Անգլիային անել:

Դահլիճի ճառի մէջ մոռացված չէ յիշել և այն գաղնագրութեան մասին, որ Անգլիան կապել է սուլթանի հետ սորուների առևարրին վերջ դնելու մասին, և յոյս է յայտնված, որ պարլամէնտը չի գլանայ այս գործին վերաբերեալ անցքերը նորից միաբան նութեան ենթարկել, և աշխատել մշակել անհրաժեշտ և քրէական գործերին վերաբերեալ բոլոր օրէնքները: Վերջապէս ճառը վերջանում է այն խոստումով, որ հոգային կալուածների վաճառման և ձեռքից ձեռք անցնելու օրէնքը նշանաւոր դիւրութեան և զանազան փոփոխութիւնների կենթարկվի:

80 թւականի պարլամէնտը մեծ-մեծ յոյսերով է բացվում:—Տեսնենք ի՞նչ կը լինի նրա գործունէութեան արգասիքը....

«Голосъ» լրագրի վերջին հեռագրերից մենք հաղորդում է, որ մարկիզ Սէլիսբիւրիի առողջութիւնը գնալով լաւանում է:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ 16 յունվարի

Հայի թանգութիւնը Սալմաստում օրըստօրէ ասականալու վրա է և ամենևին չժանանալու յոյս չը կայ. Այժմ ցորենի մի բեռը ծախվում է վեց անգամ աւելի թանդ գնով, քան թէ սովորաբար առաջ միշտ ծախվելիս է եղել. Ցեղացի հայերի մեծ մասը հացին կարօտանում են հաց գտնել, մի կողմից էլ աւելացել է նրանց վրա ցանկասանքի աղբակ գաւառից այստեղ եկած բազմաթիւ հայ գաղթականների հոգսերը, որոնց նոյնպէս պէտք է կերակրել, որ սովից չը մեռնեն. Միւս կողմից մահմետականները հանգստութիւն չեն տալիս, որովհետև նրանք աւելի ազքատ են և աւելի հացի կարօտ. Եւ թանգութեան պատճառով առաջ են գալիս գանազան տեսակ անկարգութիւններ.

Յունվարի 3-ին պատահեց մի սարսափելի անցք. Մի պարսիկ Ախտախանայ գիւղից, Աւդիլ Յուսէին օղլի անունով, ունենում է մի վեցամեայ աղջիկ ծաղիկով սասանիկ հիւանդացած. Հայրը մտածելով, որ իր աղջիկը երկար չի ապրի, սկսում է նրա մահից օգուտ քաղել. վեր է առնում հիւանդ աղջիկը, կապում է իր չալակին, և որպէս մուբազական զիմում է Ղալասար անունով հայոց գիւղը. Այդտեղ Աւդիլը իր չալակով մանում է մի տուն, որ պատկանում էր պ. Մարգարա Աղուամանասեանին և սկսում է ոգորմութիւն խնդրել. Տանեցիք ինչ որ տալիս են, նա գոհ չէ մնում և սկսում է աւելի պահանջել և սպառնալիքներ կարդալ.

Վերջապէս տանեցիք սկսում են նրան մի կերպով հեռացնել, այդ միջոցին Աւդիլը ժամանակ է գտնում, և իր ուսին բարձած ծաղկեան երեխային ձգում է հայ Մարգարի տան վառված հնոցի (թանիրի) մէջ, և ինքը դուրս գալով սպառակ է բարձրանում, և միւս պարսիկներին օգնութեան է կանչում, ասելով, իբր թէ հայերը նրա երեխան խլեցին և ձգեցին հնոցի մէջ. Այդ միջոցին Մարգարի ընտանիքը կարողանում է երեխային դուրս բերել կրակի միջից փոքր ինչ այրված. բայց տանեսին կենդանի յանձնում են անգութ հօրը. Նա տանում է երեխային իր տունը, որը երկու օրից յետոյ մեռնում է. Այդ էր Աւդիլի ցանկութիւնը, որ իր նպատակին հասնէր. Նա գնդացաւում է իր գիւղի մի քանի ազաներուն, և նրանք խելք Մարգարին տալուցնելի են ենթարկում, բանական կաշառքներ են տանում. Մարգարի պատճառով ձեռակոծ են և մի քանի ուրիշ հայեր, որ նրան պաշտպանում էին.

Դրանով ևս բանը չէ վերջանում, տեղային իշխանութիւնը լսելով, սկսում է Մարգարին չարչարել և նրանից փող պահանջել, մինչև Աւդիլը խղճահարվելով, գնում է մի մոլլայի մօտ, խոստովանվում է, թէ Մարգարը կամ նրա տանեցիքը յանցաւոր չեն, այլ ինքն է եղել իր աղջկայ մահվան պատճառը, և սոսկ կամ քաղցածութիւնը ստիպել նրան մի այսպիսի սպանութիւն գործել. Այս խոստովանութեան հիման վրա մոլլան մի փէտա է գրում և մօտ յիսուն հոգիների կնիքով վաւերացնում է, և յանձնում է Մարգարին, որ նա անմեղ է Աւդիլի երեխայի սպանման գործի մէջ.

Այսպիսի գործարութիւններից վախենալով, հարերը այժմ ստիպված են իրանց դուները փակել դրսի մուսլիմանների առջև, որոնց թիւը օրըստօրէ բազմանում է. Ջարմանալին այն է, որ պարիսիները առատութեան տարիներում հացի հացը չէին ուտում, այնպէ համարելով, իսկ այժմ սովի ժամանակ ամեն կողմից թափվում են և հաց են պահանջում. Ցանկալի կը լինէր, որ պարսիկները այժմ նոյնպէս մտածէին, թէ հացի հացը այնպէ է մարդասպանի համար, գոնէ կազատվելիք նրանցից.

Ռուբէն Ռուբէնեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Daily News» լրագրին Մադրիդից հեռագրում են յունվարի 27-ից հետևեալը. «Շուտով Օսէրսի դաշը կը սկսվի. Պաշտպանը պահանջից որ մեզադրվածին բժշկական քննութեան ենթարկեն. Բժիշկները հետազօտելով մեզադրվածին այն եզրակացութեան հանան, որ նրանցից մի քանիսը նրան մտաւորապէս բոլորովին առողջ են համարում, իսկ երկու բժիշկներ նրան խելագար հրատարակեցին. Մեզադրվածը շարունակում է հաստատել, որ իր արած գործը բոլորովին քաղաքական նպատակ չունէր.»

—Վիէննայի «Deutsche Zeitung» լրագրին Ֆիլիպպօլից հեռագրում են, յունվարի 28-ից հետևեալը. «Բուլղարական էկզարխը երէկ յայտնեց բուլղարական իշխանին և իշխան Ռոգորիդին իր չուտ կ. Պօլիս մանապարհ ընկնելու մասին, ուր նա դիտաւորութիւն ունի տեղափոխել իր առաջնորդարանը. Իշխան Ռոգորիդին և Ֆիլիպպօլի բազաքային ժողովի պատգամաւորութիւնը մանապարհ կը գնեն նրան մինչև Գերմանի.

—Վիէննայի «Polit. Corresp.» լրագրին կ. Պօլսից հեռագրում են յունվարի 27-ից հետևեալը. «Անգլօ-թիւրքական դաշնագրութիւնը, գերեվարառութիւնը ուշնայնելու մասին, ուր յօդուածներ է պարունակում իր մէջ. Այդ դաշնագրութեան զօրութեամբ, թիւրքաց ջրերի մէջ լողոց բոլոր կառածաւոր նաւերը, է բաց առնելով միայն պատերազմական նաւերը, կարող են բռնվել և խուզարկութեան ենթարկվել. Ցանցաւորները քրէական օրէնքներով կը պատժվին.

ժամին ձմեռվայ պալատի գլխաւոր պահպանի կացարանի ներքնայարկում ձայնիւն առաջացաւ: Ցինլանդիան գվարդիական պահապան գնդի ստորաստիճան գիւնուրականներից 8 հոգի սպանվել են, իսկ 45 հոգի էլ վիրաւորվել են: Կացարանի յատակը և գոգի քանի խորովածները փլացած են: Հրամայված է ձայնիւնի պատճառները հետազօտել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 փետրվարի: Սաբուրով գեներալը փետրվարի 3-ին հասաւ Ս. Պետերբուրգ:

ԻԿՈՒՏՍԿ, 4 փետրվարի: Չինաստանի նախկին դեսպան Պետերբուրգում, Ջունգխոսու, չինաց կայսրի հրամանով աստիճաններից զրկված է և գաւառտանին է ենթարկված: Իրիստուկում թանգութիւն է: Հանարի ալիւրի պուդը արժէ 3 բուլ 40 կոպ.: Երջանկայում գիմնազիստիա է տիրում: Զանազանութեան պատգամաւորութիւնը խնդրում է փակել տալ արտի գործարանները և ապահովացնել բնակիչների համար հացի պաշարը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի: «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ մինիստր Նաբոկով փետրվարի 2-ին սկսեց իր պաշտօնավարութիւնը:

ՓԱՐԻԶ, 5 փետրվարի: Ֆրէյսինէ շուտով կը հրատարակի այն գօրութիւնները, որոնք վերաբերում են յոյնութիւրքաց սահմանների ուղղման և Բուամինիայի հրէաների պատասխանը:

ՎԻԵՆՆԱ, 5 փետրվարի: Պաշտօնապէս հրատարակված է, որ Կանրագ ժողովրդական լուսաւորութեան մինիստր է նշանակված, կրիզգաու նշանակված է գաւառութիւնների մինիստր, և Խորէմայր էլ ֆինանսների մինիստր: Կայսրը կատարեալ շնորհակալութիւն է յայտնում ցոյց տուած ազգասիրական անձնանուիրութեան մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: Պետական բանկի 5%, տոմսակին առաջին շրջանի արժէ 93 բ. 50 կ., երկրորդ 93 բ., երրորդ 93 բ. 50 կ., չորրորդ 93 բ. 25 կ., Նեբքին 5% առաջին փոխառութեան տոմսակին արժէ 228 բ. 25 կ., երկրորդ 227 բ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակին արժէ 91 բ., երկրորդ 91½ բ., երրորդ 91½ բ., ասկի 7 բ. 59 կ.: Ռուսաց 1 բուլ Լօնդոնի վրա արժէ 26 պէնս. ռուսաց 100 բուլ Գերմանիայի վրա արժէ 221 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 272 ֆրանկ: Ցրամագրութիւնը խաղաղ է:

խմբագիր—հրատարակող ԴՒՒԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: Ա յսօր Բուլղարական իշխանը հասաւ Ս. Պետերբուրգ: «Новости» լրագիրը լսել է, որ Համալսարանի ուսանողների ամբոխութիւնը, ինչպէս և ամբոխացած մարդոց համալսարան ընդունելը վնաս պէտք է արգելվին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսակին առաջին շրջանի արժէ 93⅛ բ., երկրորդ 92⅞ բ., երրորդ 93 բ. 50 կ., չորրորդ 93⅛ բ., Նեբքին 5% առաջին փոխառութեան տոմսակին արժէ 229 բ., երկրորդ 228 բ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակին արժէ 91 բ. 25 կ., երկրորդ 91 բ. 25 կ., երրորդ 91 բ. 1⅛ կ., ասկին արժէ 7 բ. 63 կ.: Ռուսաց 1 բուլ Լօնդոնի վրա արժէ 25⅜ պէնս. Ռուսաց 100 բուլ Գերմանիայի վրա արժէ 219 մարկ ⅞ պֆ., Փարիզի վրա 272 ֆրանկ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ երէկ փետրվարի 3-ին կէսօրից յետոյ, նօթերդ տան 10 ժամին, երեւանեան հրապարակի վրա, Թամանիվի քարվանսարայի մօտ, պոլիցիական վարչութեան հանդիպ ԱՃՈՒՐԴՈՎ ԿՐԱԽՎԱ ԱՃՐԻ ԼՓՄԻԱ ՄԱՃԻՍՈՒՆԻՑ շարժական կաճճրը, որ բաղկացած է զանազան կահ կարասիքից, պահարաններից, բուֆետից և այլն և որ գնահատված է 148 բ.: ԱՃՐԻ ՄԱՃԻՍՈՒՐՈՎԻ կալքը ծախվում է Սահեան Պօմպալովի 1880 թ. Պարտքի և 1876 թուի սեպտեմբերի 14-ից սկսած պարտքի ՏՕԿՕՍԻ և դատաստանական ծախս 120 բ. ՉՔ ՎՃԱՐԵԼՈՒՀԱՄար:

2—3

ՆԻԿՕԼԱԷՎՍԿԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՑ ԻՒՍՈՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է **ՎԱՐՉԵԼ** չորս մեծ և չորս միջակ սենեակներ մեծ բակով, Հաւլոթարում, աւելի Պօկրովսկի կանջարմի մօտերում:

Ա յդպիսի շինութիւն ունեցողներին խնդրում ենք շնորհ բերել յիշեալ ուսուցիչարանը, Պօկրովսկի կանջարմի դիմաց, և խօսակցել պայմանների մասին ուսուցիչարանի տեսչի հետ, աւելորդ օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյեան:

2—3

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ուսումն Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱԶԻԱՅԻ մինի մէջ, ցանկանում է վարժուհու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒՍՈՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում ենք դիմել հետևեալ հասցէին. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив, Іоану.

4—5

= ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱԶԱՐԻ և ՀԱՒԼԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. առւսաց բազարի վրա 18 համարներ և Հաւլարարի հրապարակի վրա 40: Ցիշեալ շինութիւնները ՎԱՐԶՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԴՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի պայմանները կը յայտնվին:

2—3

ՓԱՐՈՍ ՀԱՑԱՍՏԱՆԻ

Վերնագրով վերջամեայ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ հանդիսի 1880 ամի առաջին տետրն տպաւորուեցաւ և այս օրերումս կուզարկուի պատուիրողաց: Այս տետրիս մէջ տրուած կան 36 ՊԱՏԿԵՐ, յորոց 12-ն ԱԶԳԱՅԻՆ են: ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ 1880 ամի երկու տետրակաց գինն է 2 ռուբլի. իսկ առանձին առանձին գնողների համար՝ իւրաքանչիւր տետրի գինն է 1 բ. 50 կ. Հանգերձ առաքմամբ:

Հրատարակիչ Զարմայր Մսերեանց:

3—4

Զ. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառատոհմում ծախվում են՝

1. Գալֆայեան. Ա—բառգիրք Հայ-գաղղիաբէն: Dictionnaire Arménien Français, գինն է. . . . . 6 բ.
2. Գալֆայեան. Ա—Հայկական գեղաքրութիւն, գինն է . . . . 1 բ.
3. Մ ե ծ ծ ա տ ո ւ ն ե ա ն ց (եղիշէ վարժապետ) —Երգարան աղջկանց և աշակերտուհեաց հայկական ուսումնարանաց: Հատ. ա գինն է. . . . . 1 բ.

2—3

ՀԱՇՏԱՐԱՐ գատարանի 4 բաժնի դատաստանական ՊՐԻՍՏԱՎ ՎԱՍԻԼԵՆԿՈ քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏՐՎԱՐԻ 16-ին առաւօտեան 10 ժամին Ս. Պետերբուրգի գաւառական դատարանի գրասենեակում պիտի ծախվին հետևեալ անշարժ կալուածները, որոնք գրաւված են Ս. Պետերբուրգի առևտրական Ֆ. Ի. Ռոսսիի կողմից Ս. Պետերբուրգի առևտրական Ա. Ա. Ռոսսիի վրա ունեցած 1879 թուի Մարտի 15-ի 1000 ռուբլի պարտքի համար:

1. Ս. Պետերբուրգի Ռոժդեստվենսկայա մասում 2-րդ քանակի 1-ին թաղամասում 1-ին հատուածում 1-ին փողոցում 1-ին տունը, որ կազմված է 1 քարաշէն տնից, 1 փայտաշէն տնից, 1 ախոռից, 1 սայլատնից, 1 ջրհորից և 1 զուգարանից, որոնց ընդհանուր տարեկան վարձը 1880 թուի Մարտի 1-ից սկսած 1881 թուի Մարտի 1-ը 1200 ռուբլի է:
2. Ս. Պետերբուրգի Ռոժդեստվենսկայա մասում 2-րդ քանակի 1-ին թաղամասում 1-ին հատուածում 1-ին փողոցում 2-րդ տունը, որ կազմված է 1 քարաշէն տնից, 1 փայտաշէն տնից, 1 ախոռից, 1 սայլատնից, 1 ջրհորից և 1 զուգարանից, որոնց ընդհանուր տարեկան վարձը 1880 թուի Մարտի 1-ից սկսած 1881 թուի Մարտի 1-ը 1200 ռուբլի է:

Ծանուցանելով այս մասին, հրաւիրում ենք ցանկացողներին ներկայանալ նշանակված ժամին:

Ծանօթ. Ցանկացողները կարող են տեսնել վերոյիշեալ անշարժ կալուածները նախքան ծախվելը:

Дозволено Цензурою 6 Февраля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона